

ՎԱԶԳԵՆ ՎԵՆԱՓԱՌԸ ՏԱՄՆԱՄՅԱ ՆԵՌԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԻՅ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջնկեղեցական հարաբերությունների բաժինը լույս է ընծայել «Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց» գիրքը, որում ի մի են բերված Վազգեն Վեհափառի վախճանման փաստամյակի առիթով ասված հիշատակի խոսքերը, ինչպես նաև հոգեւոյս Հայրապետի անցած կյանքի ճանապարհը ներկայացնող մի շարք հոդվածներ և հուշագրական ակնարկներ: Առանձին մի բաժնով ներկայացված են Վազգեն Վեհափառի փարբեր փարիներին խոսված մի շարք քարոզները¹:

Այս հատորը հրապարակվել է մեկնեստությամբ Ռուփի և Նշան Տերպերյանների (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ, Լոս Անջելես):

Գիրքը բացվում է Ներսես արքեպիսկոպոս Պողապալյանի մուրքի խոսքով, որում երջանկահիշատակ Հայրապետը այսպես է բնորոշվում. «Անցնող 39 փարիների ընթացքում Վեհափառ Հայրապետը գրավոր հիշատակության արժանի իր գործունեությամբ, որպես խոհուն և անձնդիր հոգևորական, իր անձի հանդեպ մեծագույն պարկառուքով ու հեղինակությամբ, դարձավ Հայաստանյայց Եկեղեցու և հայ ժողովրդի սիրելի Հայրապետը: Նրանից ճառագայթող լույսը ջերմացրել է ողջ հայության սիրտը՝ կապելով այն Ս. Էջմիածնի և հայրենի հարազատ հողի հետ»:

Վազգեն Առաջինի վախճանման փաստամյակի առիթով տրված Հայրապետական Կոնդակում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը շեշտում է հարկապես այն հանգամանքը, որ Վազգեն Վեհափառի հայրապետության փարիները թեև ամբողջապես չէ, որ նպատակով էին Հայոց Եկեղեցու գործունեությունը իրականացնելու համար, սակայն երջանկահիշատակ Հայրապետը իմաստուն մի խորագիտությամբ կարողացավ հաղթահարել ժամանակի կաշկանդիչ արգելքները, վերաշինության և պայծառության մի նոր աստիճանի բարձրացնելով Ս. Էջմիածինը. «Չորս փաստամեակ աջալուրջ հովուեց իր հօրը շնորհագարող Հայրապետը՝ Սուրբ Էջմիածնից հայեացքը յառած դէպի հեռուն գնացող գալիքները, դէպի պայծառ հորիզոնները հայ ժողովրդի և նոր արշալոյսը Հայ Եկեղեցու: Նովուեց մի ժամանակում, երբ Սուրբ Էջմիածինը չունէր ամբողջ ազատութիւնը իրականացնելու համար իր առաքելութիւնը Հայրենիքում և աշխարհով սփռուած իր ժողովրդի կեանքում: Սուրբ Էջմիածինը գործելու ազատութիւնը չունէր, բայց ունեցաւ իմաստուն ու քաջարի Աստուածաբնաւ Գահակալ, ով անվարան հաւատով կանգնած հասարակութեան վեմին Հայ Եկեղեցու և հաւաքարիմ աւանդներին հայոց մեծագործ Հայրապետների, կարող եղաւ զօրացնելու ու բարձրացնելու մեր Եկեղեցին»:

Վեհափառ Հայրապետի Սրբաբառ Կոնդակին հաջորդում է ՆՆ Նախագահ Ռոբերտ Քոչարյանի խոսքը, որում ասվում է. «Համաժողովրդական սեր և ականաճանք վայելող Վազգեն Առաջինի հովվապետության 39 փարիները համընկան մեր ժողովրդի և Եկեղեցու համար բարդ և պարասխառնաբար ժամանակների: Նա իր ծավալած վերականգնողական,

¹ Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ս. Էջմիածին, 2005, 255 էջ:

շինարարական, գիտակրթական և մշակութային մեծ գործունեությամբ այսօր դասվում է մեր պատմության վեհագույն կաթողիկոսների շարքին:

Հայությանն ուղղված նրա իմաստուն ու հեռավոր խորհուրդները, հորդորները մեր ժողովրդին օգնել են կողմնորոշվելու և ուղղորդել են պետականության բացակայության ու բարդ քաղաքական իրավիճակներում»:

Վազգեն Վեհափառի կենսագրությունն է ներկայացված Ղուկաս Բաբայանի հոդվածում:

Կենսագրական այս ակնարկին հաջորդում են Վազգեն Վեհափառի հոգևոր գործունեությունը ներկայացնող մի շարք գրություններ, որոնք սկսվում են Հայրապետական անդրանիկ Կոնդակով, այնուհետև ըստ փոնախոսական ընթացքի բերված են մի շարք քարոզներ, որոնք խոսվել են թե՛ Ս. Էջմիածնի և թե՛ աշխարհի հայկական փարբեր եկեղեցիների բնմերից:

Տասնամյակների հեռավորությունից այս քարոզները շարունակում են հիացնել իրենց հոգևոր խորքով, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հանդեպ նախանձախնդրությամբ և ազգային-հայրենասիրական խորունկ շնջով:

Գրքում գերելված «Վեհափառ Հայրապետը որպես շինարար» (Վարազդատ Հարությունյան) և «Վեհափառ Հայրապետը որպես փոնախոս» (Տ. Ասողիկ քին. Կարապետյան) հոդվածները ամփոփ ձևով ներկայացնում են երջանկահիշատակ Հայրապետի կառուցողական գործունեությունը ու հոգևոր-գրական ժառանգության քարոզխոսական կողմը:

Վազգեն Վեհափառի գործունեության փարբեր բնագավառներն ու կյանքի մի շարք հեփաբերի դրվագներն են ներկայացնում հոգևորական ու աշխարհական մի շարք գործիչների հուշերը:

Այս հուշերում մեր առջև ուրվագծվում է Հայոց Եկեղեցու պատմության նոր շրջանի և ոչ այնքան դյուրին ժամանակաշրջանի իրապես մեծագործ Հայրապետի դիմանկարը ժամանակի ազգային-եկեղեցական ու հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր համապարկերում:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԿՅԱՆ